

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Փայլակ Թևանյան Հակոբի-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հուշանվերը իրենից ներկայացնում է ընկուզենու փայտից պատրաստված 183մմ /±3մմ/ լայնությամբ, 200մմ /±3մմ/ բարձրությամբ վահանաձև հիմնամաս որի եզրերը ունեն ֆրեզային մշակվածություն և դրա վրա 125մմ տրամագծով և 5մմ /±0,5մմ/ հաստությամբ ամրացող միակողմ պատկերով սկավառակ: Սկավառակը պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Սկավառակի հիմնական գույնը ոսկեգույնն է: Սկավառակը եզերված է 7մմ /±0,5մմ/ լայնությամբ շրջանակով: Սկավառակի ներքևում կորածև ռուսերեն գրված է «АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ», իսկ վերևում կորածև անգլերեն գրված է «ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA»: Սկավառակի շջանակը ներսի կողմից եզերված է լաբիրինթանման նախշով, որը լցված է կապույտ եմալով, որը խորհրդանշում է ընթացիկ բացահայտվող գործերը և կապույտ գույնը կրում է պաշտպանական իմաստ: Սկավառակի կենտրոնում գետեղված է 86մմ /±0,5մմ/ տրամագծով շրջան, որի վրա կորածև գրված է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը: Սկավառակի կենտրոնում տեղակայված է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը` 71մմ /±1մմ/ x 34,5մմ /±1մմ/ չափերով, որն ունի գլխավերևում կորածև եզերված Հայաստանի Հանրապետության եռագույնը` կարմիր, կապույտ, նարնջագույն եմալներով և ներքևի մասում կապույտ գույնով եմալապատ ժապավենի վրա «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրվածքը: Խորհրդանիշի հետևամասը զարդարված է սրածայր համաչափ դետալներով հավաքված զարդանախշերով որպես համակարգված և սառնասիրտ աշխատանքի խորհուրդ: Հուշանվերի հետևամասում ամրացված է ոսկեգույն կլոր կախիչ: Տուփը` ընկուզենու փայտից, չափսերը` 210 մմ</p>

/±1մմ/ x 225 մմ /±1մմ/ , բարձրությունը՝ 50 մմ /±1մմ/ կափարիչը փակված վիճակում: Տուփի խորությունը 25 մմ/±1մմ/ , իսկ կափարիչինը 10 մմ /±1մմ/: Տուփի եզրային փայտի հաստությունը 10մմ /±1մմ/: Տուփը ներսից պատված է շագանակագույն գամշե աստառով: Չսպանակաձև սռնիները տեղադրված են կափարիչի բացվող մասի 210 մմ կողմում: Կափարիչի եզրերը ունեն ֆրեզային մշակվածություն, մեջտեղում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը՝ փորագրված, խորհրդանիշի չափերը՝ 150մմ /±1մմ/ x 75մմ /±1մմ/, որի ներքևի հատվածում փորագրված է՝ «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը: Տուփի ետնամասը գամշապատ է, գույնը՝ սև: Աշխատանքը սկսելուց առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ամբողջական նկարագիրը տես կցված ֆայլում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Пайлак Теванян Акопович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԲԱՃԱՊՁԲ-23/15
ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	